ՀԱՍՏԱՏՎԱԾ Է Մ/Խ ԹԻՎ 3 ՆԻՍՏՈՒՄ

ՏՆՕՐԵՆ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

27 2023թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
ՊՈԱԿ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ-<<ՇԱՔԱՐԱՄՆԿԵՐԻ ԴԵՐԸ ՄՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ>>

ԱՌԱՐԿԱ _ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱՐԱՆ _ VII

ՈՒՍՈՒՑԻՉ Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

Մ/Մ ՆԱԽԱԳԱՀ Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ Ս. ՊՈՂՈՍՅԱՆ

Сканировано с CamScanner

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 – 2024 ուստարի

Ուսումնական տարվա առաջին կիսամյակում Դաշտի միջնակարգ դպրոցում անցկացվել է Նախագծային աշխատանք «Շաքարասնկերի դերը սննդի արդյունաբերիության մեջ» թեմայով: Նախագիծը իրականացվել է 3 շաբաթվա ընթացքում/ 5 ժամում/ :

ՈՒսումնական նախագիծը եղել է առարկայական՝ կենսաբանություն առարկայից: Այն իրականացվել է 7-րդ դասարանում՝ երեք աշակերտների մասնակցությամբ:

Մասնակից աշակերտներ՝

Գևորգյան Նարեկ

Ավետիսյան Աննա

Սիմոնյան Միսակ

Ուսումնական նախագծի նպատակը

Զարգացնել սովորողների հետազոտական կարողությունները,ձևավորել դրանց վերաբերյալ վերլուծական հմտություններ ու վերաբերմունք:
Ներկայացնել՝ շաքարասնկերը որպես արդյունաբերական հումք, ձևավորելով խմբում աշխատելու կարողություն:
Ներկայացնել կապը կյանքի և կրթության միջև:

Сканировано с CamScanner

Ուսումնական նախագծի վերջնարդյունքները

ա. Աշակերտները կկարողանան հիմնավորել սնկերի մասին իրենց ունեցած գիտելիքները :

բ. Ներկայացնել սնկերի՝սննդառությունը, փոխշահավետ կապերը, օգտակար և վնասակար հատկանիշները, ինչպես նաև սունկը որպես յուրահատուկ օրգանիզմ:

գ. Բացատրել նրանց կարևորությունը սննդի արդյունաբերության՝հատկապես սպիրտային խմորման ժամանակ:

Կարողություններ, որոնք զարգացել են այս նախագծի ընթացքում

Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
Սովորել սովորելու կարողունակություն

Լեզվական գրագիտություն և կարողունակություն

Մշակութային կարողունակություն

Թվային և մեդիա կարողունակություն

Աշխատանքի ընթացքը

Աշխատանքի սկզբում աշակերտները ծանոթացել են թեմային: Այնուհետև կազմվել է գործունեության ծրագիր, ձևավորվել են աշխատանքային անհատական խմբեր և յուրաքանչյուր անհատ ստացել է իր հանձնարարականը:

Աշխատանքը կատարելու ընթացքում աշակերտները ստացել են ղեկավարի աջակցությունն ու ուղղորդումը:

Сканировано с CamScanner

Հետազոտության բովանդակության համապատասխան նյութերի ուսումնասիրության միջոցով աշակերտների այցելել են անհատ ձեռներեցներին և մեկնաբանել են խմորասնկերի դերը սպիրտային խմորման գործընթացում: Առաջարկել են խնդրի լուծման սեփական տարբերակները: Այս գործընթացն իրականացնելու համար ձեռք են բերել տեսական գիտելիքներ թեմայի վերաբերյալ: Կազմակերպել են այցեր և հարցազրույցներ, պտրաստել են ահիկաշար,պաստառ և տեսահոլովակ:

Վերջնարդյունքը ներկայացվել է տնօրինությանը և կատարվել է գնահատում:

Сканировано с CamScanner